

ԻՆՆԵՐՈՐԴ ՏՍՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարեկանը 6 րուբլ
Առանձին համարները 5 կոպեկով
Թիֆլիսում գրվում են միմյանի թմբադրաման մը:

Օտարադադարացիք գրվում են ուղղակի
Тифлисе, Редакция, Мусакъ:

Թմբադրամանը լաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
իրարանցիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բաղադրական մտածողութիւնը:— Ներքին տե-
սու իւր իւր: Նամակ Մոսկովայից: Ներքին ուրեր:—
Արտաքին տեսութիւն: Արեւելեան գործեր:
Թիֆլիսի:— Մշակիչ հեռագիրներ:— Ցայտարար-
ութիւններ:— Բանասիրական: Նամակ Ախալ-
ցխայից:

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԻՔ-ՆԵՐ

Պարսկաստանից սարսափելի
լուրեր են գալիս: Մենք ունենք
խմբագրութեան մէջ այդ երկրից
ստացած նամակներ, որոնց հետ
կը ծանօթացնենք ընթերցողին,
իսկ առ այժմ կարճ կերպով կը
պատմենք նամակների մէջ նկա-
րագրված անցքերը:

Պարսկաստանի Սոլուկ-Ֆու-
լախ, Միսնդամ, Բինսը և Մա-
րաղա գաւառները տիրել են
քիւրդերը (Հէյխ-Իբրահիմ Տի-
առաջնորդութեամբ: Քիւրդերը,
ասում են, թուով 100,000 են,
բոլորն էլ լաւ զինաւորված են
մարտիչի չրացաններով, ունեն
և մի քանի թնդանօթներ:

Ըմեն աեղ, որտեղ անցնում
են այդ բարբարոսները, նրանք
աւերում, այրում են գիւղեր և
քաղաքներ, որի են անցնում բո-
լոր բնակիչներին, ոչ միսի կեան-
քըն անգամ չը խնայելով: Թէ
հայերը և թէ պարսիկները նը-

րանց կատաղութեան գոհ են
զառնում: Ով որ չը կարողացաւ
փախչել, նա մահվան է դատա-
պարտված: Քիւրդերը նոյն ա-
նողորմ կատաղութեամբ վերա-
բերվում են դէպի պարսիկները,
որքան և դէպի հայերը, որով-
հետեւ պարսիկները շիա ազան-
դին պատկանած լինելով, սիւն-
նի աղանդի քիւրդերը նրանց
իրանց անձնական թշնամի են
համարում:

Պատմում են որ Միսնդամի
մէջ, մի քանի հազար հոգի մահ-
մտականներից պատուարվել
էին մի մզկիթի մէջ, բայց
քիւրդերը չը յարգեցին նրանց
սուրբ տաճարն անգամ, շրջա-
պատեցին մզկիթի շինութիւնը
ցախով, խոտով և յարդով, կրակ
տուեցին այդ մզկիթին և այրե-
ցին այսպիսով թէ շինութիւնը
և թէ նրա մէջ պատուարված
ժողովուրդը: Ետպատականի մէջ,
զժքադապէս պարսից զօրքը չը
կայ, բոլոր զօրքերն էլ այժմ
Խորասանումն են, որ Ախալ-
Տեկի սահմանակից երկիր է:
Մինչև որ զօրքերը կը հասնեն,
կարող է արդէն ուշ լինել, ո-
րովհետեւ քիւրդերը այժմ թաւ-
րիզից երկու օրվայ ճանապարհի

հեռաւորութեան վրա են: Թաւ-
րիզին մեծ վտանգ է սպառնում,
ժողովուրդը թէ քրիստոնեայ և
թէ մահմետական փախել և
փակվել է թաւրիզի մէջ:

Այդ բարբարոս շարժումը
ցոյց է տալիս որ քրդական մի-
ութիւնը արդէն կազմվել է, ո-
րովհետեւ, ինչպէս ասում են այդ
ասպատակ քիւրդերի մէջ կան
ոչ թէ միայն պարսից, բայց և
թիւրքաց քիւրդերը:

Հէյխ-Իբրահիմ Տիառաջն է
իրան անկախ իշխան, խալի-
ֆա իր տիրած երկիրների վրա:
Հաւատացնում են որ այդ շար-
ժումը գրգռված է թիւրքաց կա-
ռավարութեանց, նրա ծրագիրը
պատրաստված է Կ. Պոլսում:
Եւ ճշմարիտ, որտեղից քիւր-
դերը կունենային այդքան թուով
կատարելագործված մարտիչի
չրացաններ և մինչև անգամ
թնդանօթներ....

Ուրեմն եթէ իսկապէս քրդա-
կան միութիւնը արդէն կազմվել
է և եթէ թիւրքաց կառավա-
րութիւնն է դրդել Հէյխ-Իբ-
րահիմին նախ յարձակվել Պարս-
կաստանի վրա, այդ նա արել
է նրա համար, որ երբ քիւրդերը
կանցնեն թիւրքաց սահմանը և

կը սկսեն Հայաստանը աւերել և
նրա բնակիչներին կոտորել, Բ-
Դուռը կը կարողանայ Եւրոպա-
յին պատասխանել՝ «ես չը գի-
տեմ այդ ինչ քիւրդեր են, դրանք
իմ հպատակ քիւրդերը չեն, դը-
րանք Պարսկաստանից են անցել,
ես ոյժ չունեմ նրանց զսպելու»:

Բ. Դուռը Հայաստանում
րէֆորմներ մտցնելու համար չորս
ամիս ժամանակ է պահանջել
Եւրոպայից: Այդ չորս ամսվայ
ընթացքում նա ժամանակ կը
վատակի, քիւրդերը կաւերեն
Հայաստանը, կոչնչացնեն բոլոր
հայերին,— և ահա այն ժամանակ
հայոց խնդիրը ինքն իրան կը
վճռվի, որովհետեւ թիւրքաց
Հայաստանի հայերը բոլորն էլ
ջնջված կը լինեն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

3 հոկտեմբերի

Ի դուր է հաղում Մեղուի: Կ. խմբագիրը իր
լրագրի 71 համարում ցոյց տալ, որ Մշակում
տպած Բ. ստորագրութեամբ յօդուածով ես գրը-
ղուել եմ ուզում Ցաճկա-հայերին, միայն ընդանից
արիւն պահանջելու և նոցա ներկան և ապագան
խաղի հանելու: Կատարով:

Իմ խօսքին առիթ տուեց Մեղուի 71 համա-
րում լոյս տեսած առաջնորդող յօդուածը, որ պ
խմբագիրը այնպէս լիովին հաւատ է ընծայում
թիւրքայի խարդախ և նեղատր քաղաքակա-
նական քաղաքական տակ է եղել), որի միջնորդու-
թեամբ լրագրորդից ֆէրմն են բերել տալիս և
այսպիսով կաթօլիկներից ետ առնում վանքը: Այս
ժամանակներում միայն երկու հարիւր տուն էս
լուսաւորչական միացած կը լինէր, որոնք ուժից
և կարողութիւնից ընկած, և կաթօլիկ հոգեւորա-
կանների ձեռքից դեռ չպաշտպան, թաւրի
հարստահարութիւններին և իրանց ալակըն եզ-
բարց առեւթիւններին չը դիմանալով, նրանցից
շատերը կը գաղթեն և շատերը կանցնեն կաթօլիկ
եկեղեցու գիրկը: Սորանով չը բաւականանալով
կաթօլիկ հոգեւորականները կը կաշառեն փայտե
ենիւարներին, որոնք մեզանից 100 տարի առաջ
կրկին խելով հայերի ձեռից վանքը, յանձնում են
կաթօլիկներին: Պապին հայրը կը պատմէ եղել
չօրս, թէ սուրբ Յարութեան օրը, երբ պատարա-
գից կիջին Յովհաննէս վարդապետը, երկու զաւագ
կը կտրեն նրա գլուխը և կը գրաւեն վանքը, որը
կոչվում էր տեղականների լեզուով Կոկոյա Սաղ-
տարի (Սիլվի քիլիսա), որի մէջ մինչև հիմա կա-
տարվում է հայերէն ժամերգութիւն: Վատ հետե-
ւանք ունեցաւ այդ յափշտակութիւնը, որովհետեւ
կաթօլիկ հայերը աւելի բռնացան լուսաւորչական-
ների վրա, որոնք թուով 10—20 անգամ քիչ էին:
Կաթօլիկները կաշառում էին չառաչներին և ենի-
յարներին և շարաւր էին տալիս հայ լուսաւոր-
չականներին: Ահա կաթօլիկ կղերի խաղցած դրերը
սորանից 100 տարի առաջ: Այնուհետեւ սակաւա-
ցած հայ լուսաւորչականները շինում են սուրբ
Ստեփաննոս եկեղեցին Դէրէ Մաշա կոչված թա

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԱՄՍԼՏԻՍԻՑԻՑ

1 հոկտեմբերի

Տեղեկւով որ Մշակ լրագրի գլխավոր նպա-
տակն է ընդհանուր ազգի օրգան լինել, նրա լու-
սաւորչական, յաւաքարիւնութեան, միութեան և
սիրոյ վրա խօսելու առաջն խորութեան կ'օնի, ես
կամեցայ Ախալցխա քաղաքի հին մասնում, Թա-
պառ թաղի մէջ բնակվող հայ կաթօլիկների մա-
սին տեղեկութիւն տալ: Մշակի համարներից
միում առաջին անգամ տեղի ունեցաւ «Հայ-կա-
թօլիկ» ստորագրութեամբ մի յօդուած, որը բաւա-
կանիս արձագանք գտաւ մեր հասարակութեան
մէջ: Յիշեալ կաթօլիկները այժմս բոլորովին լե-
զունին կորուսել են: Ես այս անգամ չուզեցայով
երկարացնել նամակս, կաշառտեմ ծանօթացնել
ընթերցողներին մեր եղբայր ներկայի և անցեա-
լին հետ:

Ինչպէս Մովսէս Թորոնացին գրում է, Ախալ-
ցխան Տաթ. կամ Տաթոց աշխարհ կը կոչվիր հայոց
պապականութեան ժամանակ: Այդ երկրի հայ-կա-
թօլիկ բնակիչներից շատերը իրանց լեզուն կորու-
սել են, և գոյցե բոլորովին կորուսել, եթէ այժման
ուղղութիւնը շարունակեն մեր հոգեւոր պատուե-
լիները, որոնք ծնած և շաղախված են միջնադա-
րեան հոգեւոր և մարտկած պրօպագանդայի աւա-
ղանում: Մեր պատուելի և վերապատուելի հայ-

րերը չեն ուզում որ մենք կաթօլիկ հայերս զանա-
կաններ ազգ և կրօն բառերը նոքա միշտ բարո-
ւում են, թէ Վ. Կաթօլիկները հաստատեց մեր պապի
անխալախանութիւնը. ով կունենայ յարակցու-
թիւն հայ-լուսաւորչականների հետ, նա կենթար-
կիլի քաւարանում չարաչար տանջանքների: Օրի-
նակ, մի կաթօլիկ կնքահայ էր եղած մի հայ լու-
սաւորչականի երկխոսի. մեր յարգելի տէր Պ....
բանադրեց նրան, որ երկու ամիս եկեղեցի ներս
չը մտնէ ձայնաւոր պատարագ մատուցանելու ժա-
մանակ: Աւելորդ համարելով նկարագրել մեր փը-
ռած կրքերն, որը մինչև անգամ իր կենդանի
մարմնի լեզուն չէ խմանում, և բացի թուժակի
նման սերտած շարականից ուրիշ ոչինչ չը գիտէ,
որը չէ թող տալիս ամբողջին խօսել հայերէն,—
կամենում եմ անխալի ձգել մեր բնիկ Տայեցու
անցեալի վրա: Սկզբում կաթօլիկութիւնը հաստատ-
վեցաւ Տայոց աշխարհում Ունիթորների ժամա-
նակ, ինչպէս կաւանդեն մեզ մեր պապերը և մա-
մուրը և վկայ է այն հոյակապ սուրբ Յովհաննէս և
կեղեցու արձանագրութիւնը, որը շինված է հինգ-
երորդ դարու վերջերում և վեցերորդի սկզբնե-
րում: Ա. եկեղեցին ունիթորների ժամանակ
իր ծուխի հետ անցաւ կաթօլիկ բաժանների
ձեռքը, և մինչև այժմ ամբողջութեամբ մնալով, թէ
լեզուն և թէ արարողութիւնը կաթօլիկ աղգային
եկեղեցու կերպով, անը ունի: Ինչպէս երբ պատմիլ
մի անտորադիր պատմիլի բերնով, կը խնդրի
ունիթորները հայերի ձեռքից սուրբ Յովհաննէս
եկեղեցին, այդ ժամանակից սկսեալ, հայերը իրանց

[illegible]

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

«Ինչի նկատմամբ լրագրի Կ. Պոլսի թղթա-
կիցը գրում է հետևյալը հոկտեմբերի 6-ից:
Բ. Դրան վերջին գրությունը յանձնվեցաւ
պետութեանն իր անպատեհական կերպով
շարժել, հոկտեմբերի 4-ին: Ամենքը հաւա-
տացած են, որ զորքը դիմումը է յետա-
ձգվում և որ սուլթանն է պատճառ այժ-
մեան անորոշ դրութեան: Սուլթանը հա-
ւատացած է, որ երթական համաձայնու-
թիւնը երկարատեւ չէ կարող լինել և որ
նրան խանգարելու համար հարկաւոր է
միայն ժամանակ վատակել: Մինիստրների
խորհուրդի ժամանակ Մահմեդ-նեղիմ-փա-
շա առաջարկեց զինել Դուլցինիօ, բայց այդ
առաջարկութիւնը չընդունվեցաւ այն հի-
ման վրա, որ պետութեանը գրանով չեն
բաւականանալ և չենօգործական հարցը
վերջացնելուց յետոյ, զարմեալ ծովային ցոյց
կանեն առաջ յօդուտ Գոնաստանի և յետոյ
յօդուտ Հայաստանի: Այդ պատճառով ամե-
նից լաւ է չենօգործական հարցի լուծումը
որքան կարելի է ուշացնել: Թիւրքիայի մէջ
հասարակական կարծիքը չի կայ, բայց այնու-
ամենայնիւ այն թիւրքերը, որոնք համար-
ձակվում են զործիւրի այժմեան դրութեան
վրա խօսել, նրանք անպայման պահարա-
կում են սուլթանի բռնած ընթացքը, որը
նրանց կարծիքով թիւրքաց կայսերութեան
զոյութիւնը վտանգի է ենթարկում: Մենք
ոչինչ տեղեկութիւն չենք ստանում, թէ
Թիւրքիայի սահմաններից դուրս ի՞նչ է
կատարվում: Վերջին չորս օրերի ընթացքում
մենք ոչ մի քաղաքական հետադիւր չենք
ստացել: Դրանից եղբակցեցում ենք, թէ
Եւրոպայի մէջ այնպիսի մի բան է կատար-
վում, որ Բ. Դուռը կամենում է ծածկել
իր հպատակներից: Այստեղ ամենքը այն
կարծիքի են, որ սուլթանը ընդգիմարու-
թիւնը երկու հետեւանքներ կուենայ, կամ
նա՛ կը խնայարձկն Եւրոպայի կամքի առաջ,
կամ զահնկեց կը լինի: Եւ շատ կարելի է,
որ վերջինը կատարվի նոյն իսկ թիւրք փա-
շաների ձեռքով: Այս վերջինները լաւ տես-
նում են, որ Թիւրքիայի զոյութիւնը վտան-
գի է ենթարկված և հարց են առաջար-
կում: Ինչից է, որ իրանց տուած խորհուր-
դիները, քանի որ փոքր ի շատե իրանք ծա-

նութ են եւրոպական քաղաքականութեան
հետ, մերժվում են, մինչդեռ պաշտական
ստորագրեցանքի և զանազան շրջանակների
խորհուրդները ընդունվում են: Թիւրքաց
լրագիրները նորից սկսեցին յարձակվել Դրա-
նստանի վրա ծարաժված այն լուրի առի-
թով, իբր թէ անդլիական պարլամենտը
պէտք է շուտով հաւաքվի, «Վակիթ»
լրագիրը ասում է, որ Դրանստան մտադիր է
պարլամենտի հաւանութիւնը ստանալ և
նրանից կրեղիտ խնդրել: Բայց այդ բանը
Դրանստանին չի աջողվի, որովհետեւ, ինչպէս
յայտնի է «Վակիթ» լրագրին, պարլամենտը
փոխանակ հաւանելու Դրանստանի արտաքին
քաղաքականութիւնը և նրան կրեղիտ բա-
ցանելու, առաջին մի խտրից հաշիւ կը պա-
հանի նրա գործունէութեան համար: «Դոր-
ժին» ծանօթ անձինք հաւատացնում են,
ասում է «Վակիթ» լրագիրը, որ մի ամսից
յետոյ Դրանստան կը գրկվի առաջին մի խտ-
րի պաշտօնից, ազատամիտ կուսակցութեան
անկամները կարձակվին պարլամենտից, իսկ
ուճարացիները կապտամքվին Թիւրքիան
պաշտպանելու համար:»

Տեղօրից «Նիւ Ֆրայ Պրես» լրագրին գրում
են հոկտեմբերի 6-ից: Նրեկվանից միջադ-
գային նաւատորմը խաբխիս է գցել Տեղօ-
ժոցի մէջ: Նրեկ հասաւ Կատտուրօ ծովափու-
մէ վրա և երկար խորհրդակցելուց յետոյ
չենօգործական հաւատարմատարի հետ, մի
նամակ ուղարկեց Ցետինիէ և պատասխանը
ստանալուց յետոյ ուղեւորվեցաւ Տեղօ: Ծո-
վափուտը հրաւիրեց չենօգործական թագա-
ւանիցին, ութ տարեկան Դանիօ-Վէլք-
սանդըին, որ նա այցելէ միջադգային նաւա-
տորմը: Սկուտարիի մահմեդական բոլոր աղ-
դաքնակութեանը հրամայած է զինակոր-
վել: Ամեն օր Դուլցինիօ ապստամբներ են
գալիս: Նրեկ եկան 300 աղանջներ: Բիզա-
նիս հաւաքում է զինեցի, պատերազմա-
կան պաշարներ և ուսանողներ: Սկուտարիի
30-ին Կ. Պոլսից հասան այստեղ մօտ երեք
հարիւր կանոնաւոր զօրքեր և 49 արկղ
Մարտինի հրացաններ: Սկուտարիի մէջ եղած
անգլիական բոլոր հպատակները ուղեւորվե-
լ են Անտիպարի:

ԹԻՒՐԿԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ
տեղեկութիւնները:
Դուլցինիօն խաղաղ ճանապարհով Զերնո-

րիային յանձնելը սուլթանը վերջնականա-
պէս վճռել է: Արդու-Համիդ վերջապէս
ստորագրեց մի իրարէ, որով հրամայում է
զինել Դուլցինիօ: Այդ վճիռը պաշտօնա-
պէս յայտնված է պետութեանն իր անպա-
տեհական, իսկ Կ. Պոլսից ստացված հեռա-
գիրը յոյս է յայտնում, որ պետութեանն
կը հրաժարվին Բ. Դրան վրա ծնունդ գոր-
ծելուց միւս հարցերը վճռելու համար:

Լօնդոնի մէջ հրատարակվող «Տայմս» լրա-
գիրը շնորհաւորում է Եւրոպային խնդրի
աջողութեամբ վճռվելը: Այդ լրագրի կար-
ծիքով, քանի որ սուլթանը համաձայնեց
զինել Դուլցինիօն Զերնօգորիային, դրանով
նա յետ առաւ իր այն գրութիւնը, որ այդ-
չափ վերակրեց եւրոպական պետութիւն-
ներին: «Տայմս» լրագրի կարծիքով, Եւրոպան
այժմ պէտք է հրաժարվի ստիպողական մի-
ջոցներից և Թիւրքիային ժամանակ տալ իր
միւս պարտականութիւնները իրագործելու
համար: Լօնդոնի լրագիրը ինքն իրան հա-
կաւակում է: Նորերումն նոյն լրագիրը այն
միտքն էր յայտնում, թէ Դուլցինիօն յան-
ձնելը Զերնօգորիային նրանով է նշանաւոր,
որ դրա վճռելուց է կախված Բերլինի դաշ-
նակցութեան պետութիւնները պահանջում էին
Զերնօգորիային բաւականութիւն տալ և
ուղարկել իրանց նաւատորմը: Արդիա-
կան ծովը այն պատճառով, որ Բ. Դուռը
չը զինելով Դուլցինիօ, գրանով խախտում էր
Բերլինի դաշնագիրը: Բ. Դուռն էլ հսկա-
ւակվում էր այն պատճառով, որ զիտեր,
թէ այդ մի հարցի մէջ զինումն անելուց
յետոյ, պետութիւնները չ'նշում կը գործե-
լին նոյնպէս և միւս հարցերը լուծելու համար:
Թիւրքիայի դէմ ստիպողական միջոցների
գործադրելուց հրաժարվելը նշանակում է,
որ Բ. Դուռը իրաւունք ունի բաւականու-
թիւն չը տալ պետութիւններին յունական
խնդրի, Հայաստանի և եւրոպական նահանգ-
ների մէջ վերանորոգութիւններ մտցնելու
մասին:

Դրանք ստորագրելուց յետոյ Թիւրքիան
ոչինչ բաւականութիւն չը տուեց Եւրոպային
որ սա պէտք է պահանջէ, եթէ գնահա-
տում է իր արժանաւորութիւնը: Ստիպո-
ղական միջոցները Թիւրքիայի դէմ կարելի է
միայն այն ժամանակ դադարեցնել, երբ
թիւրքաց կառավարութիւնը զրաւականներ
կը ներկայացնի, թէ ինքը կը կատարի եւ-
րոպական պետութիւնների միւս պահանջ-

ներն էլ: Այդպիսի գրաւականներ ստանա-
լուց յետոյ կարելի է Բ. Դրանը ժամանակ
տալ Ծուռաստանին վիճակված երկրները
իրան յանձնելու և Հայաստանի մէջ վերա-
նորոգութիւններ մտցնելու համար: Որով-
հետեւ Թիւրքիան իր այլանդակ վարմունք-
ներից յետոյ անկարող է այդպիսի գրաւա-
կաններ ներկայացնել, ուրեմն ամենայնա-
միջոցն այն է, որ նրան ժամանակ տրվի իր
պարտականութիւնները իրագործելու հա-
մար, իսկ միացեալ նաւատորմը այդ ժամա-
նակամիջոցի ընթացքում միայ թիւրքաց
ջրերի մէջ:

Անգլիական կառավարութիւնը համար-
ձակ կարող է այդ առաջարկութիւնը
պաշտպանել, երկու-ը չը կրելով, որ գրանով
կը խանգարվի եւրոպական համաձայնու-
թիւնը: Գերմանական լրագիրներից մէկի
մէջ մի հեռագիր կար տպված, որ հաստատ
աղբիւրներից լուր էր հայտնում, թէ գեր-
մանական և աւստրիական կառավարութիւն-
ները հաստատ վճռել են չը թող տալ Անգ-
լիային, Ռուսիային և Ռուսաստանին առան-
ձին գործել, իսկ եթէ այդ երեք պետու-
թիւնները կը հրաժարվին իրանց մտադրու-
թիւնից, այն ժամանակ Գերմանիա և Աւստ-
րիա ստիպված կը լինեն նրանց հետ միանալ:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆՈՑ

ԱԹԵՆՔ, 9 հոկտեմբերի: Այսօր բացվեցաւ
ազգային ժողովը:

Կ. ՊՈԼԻՍ, 9 հոկտեմբերի: Բ. Դուռը յետ
առաւ իր պայմանը Սկուտարիի լճի արեւե-
լեան կողմի հողային statusquo պահպանելու
վերաբերութեամբ:

ՑԵՐՐՈԼ, 11 հոկտեմբերի: «Լիվադիա»
նաւը Բիսկայան ծոցի մէջ սաստիկ փոթոր-
կին ենթարկվելուց յետոյ երեկ հասաւ
այստեղ:

ԱԹԵՆՔ, 11 հոկտեմբերի: Մինիստրու-
թիւնը հրաժարական տուեց Ընդդիմադրա-
կան կուսակցութեան անդամ Ավգերիան
ազգային ժողովի նախագահ ընտրվեցաւ:

ԲԵԼԳԻԱ, 11 հոկտեմբերի: Այստեղ մինիս-
տրական դժուարութիւններ պատահեցան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 11 հոկտեմբերի: Ֆրե-
նանսների մինիստր Դրեյք երեկ վերադարձաւ
Ս. Պետերբուրգ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

հայ լեզուով: Տաճիկները այնքան չեն ազդել հայոց
վրա, որ մուսուլման իրանց լեզուն, որքան վրա-
ցիք: Վրաստանում մինչև անգամ քահանայա-
լաւ չէին իմանում իրանի լեզուն: Հայր Պ. Մ.
Վարդապետ Մազուրեանցը բացեց իր ուսումնա-
րանը 1850 թուականին, տեսնելով, որ ուրիշ հնար
չը կայ մայրենի լեզուն տարածելու ամբողջ մէջ,
բայց միայն ուսումնարանի միջոցով: Նախ քան այդ
ուսումնարանի բացվելը, նրանք իրանց խնդրում
հաւաքեցին թէ հայ-ուսումնարանական և թէ հայ-կա-
թոլիկ աշակերտներին անխորտ: Մազուրեան ու-
ղեց, որ աւետարան գործերի մէջ ևս մտնի
հայ լեզուն, դրա համար վաճառականների մօտ
տուած իր աշակերտներին Մեզ քաջ յայտնի է,
որ Վրաստանի հայերը մինչև այսօր իրանց հայրեն-
մատենները կազմում են վրաց լեզուով: Այդ վր-
ջնասակար սովորութիւնը մասամբ վերցուց ներսե-
սեան դպրոցը, տալով ժողովրդին հայերեն գիտ-
ցող գործակատարներ: Մազուրեանցի ժամանակ
բողոքեցանք իմանում էին հայերեն ժամանակու-
թիւնը:

Նրբ այցելեց ներսեա Եւրոպ. Ախալցխայ. Պոդոս
վարդապետ Մազուրեանցը գնաց Վեհափառի
աջը համալրելու: Կաթողիկոսը նրանից պահան-
ջեց, որ վերադարձէ Սիվիլ-քիլիսան նա պա-
տասխանեց, թէ դրանով կարող է վերադառնալ կա-
թոլիկների կրօնական զգացմունքը, բայց խոստա-
ցաւ, որ Սիվիլ-քիլիսայի մէջ վաճառված մոմի
բողոքները կը յատկացնէ ներսեան դպրոցին, ի
հակառակ դէպք, հայերը կարող են պահանջ

այդ վաճառք օրէնքով: Մազուրեանցը վճարեց ինչեւ
արդիւնք քանի կենդանի էր, իսկ երջանկայի-
շատակ ներսեա կաթողիկոսի վախճանից յետոյ
մինչև հիմա էլ կաթողիկոսներ չեն վճարում: Բաւա-
կան համարվում աղքատը մեր անցեալի մասին,
դառնում եմ մի քանի օտար մեր ներկայ վիճա-
կին: Ինչ քաջաբերում է «Մաշիկ» յայտնած այն
ազգագետն միտքը, թէ նրա էջերը բաց են բոլոր
հայերի առջև անխորտ ինչ դաւանութեան և պատ-
կանէին: Ինչպէս Պոդոս առաքելը, եկեղեցու մա-
սին ասում է, թէ չիք խորի ոչ հրէի և ոչ չեթա-
նոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ
իգի, զի ամենքեան դուք մի էք ի Քրիստոս Յի-
սուս: Մենք բոլորն էլ Հայկալ ցեղից ենք, մեր
բոլորիս հայրերն էլ առաջ են եկած Հայկից: Մեր
հայրերը մի ժամանակ չեթանոսներ էին, յետոյ
լուսաւորական եղան, հիմի էլ ժամանակի հանգա-
մանքները զրոյեցին նրանց կաթողիկոսեան մէջ,
և ով գիտէ, մի ժամանակից յետոյ մենք բոլորս
էլ կը զարգանանք, և մի սերտ մի հոգի կը լինենք,
բոլոր հայերս, թէ լուսաւորական, թէ բողոքական,
թէ կաթողիկ, և թէ մաշուսական: Ամենակարգե-
արդեաւթիւնը կուենայ, հնամու մարդիկ կը սկսեն
չը համակրել, սակայն «Մաշիկ» պէտք է չը չեղվի
իր ուղղութիւնից, պէտք է գործէ, ի նկատի ու-
նենալով ազգապէս:

Նրեկ խօսք էլ մեր Մազուրեան ուսումնարանի
մասին և վերջացնեմ նամակա: Այստեղ Նիդի-
սիկեցողովի խօսքը աւելորդ չեմ համարում ինչեւ
զգուշութիւն է մայր բարեաց, անբաւարութիւն ծնող

արեան: Քանի որ է այ կաթողիկոսների մէջ միու-
թիւն կար, մի մարմին էր, կը պոչապանէր իւր
կաթողիկ ազգային եկեղեցին: Բայց երբ Հասունի
երկպառակութիւնը մտաւ մեր մէջ, այն ժամանա-
կից կաթողիկ ժողովուրդը և հոգեւորականութիւնը
բաժանվեցան երկու մաս՝ Հասունեան և Հակա-
հասունեան, այն ժամանակից մեր ուսումնարանն
իր զրկուեցաւ մայրենի լեզուի տիրող լեզու լինե-
լուց և այժմ երկրորդական կարգումն է: Մտերը
այժմ կը ցանկանան բոլորովին դուրս ձգել այդ
լեզուն, բայց բարեբաղդաւոր չաղովեցաւ Հասու-
նեան հոգեւորականներին մտցնել լատին լեզուն
մեր ուսումնարանում, դրա համար էլ, չեն կարող
բոլորովին դուրս ձգել ազգային լեզուն: Մեր հո-
գեւորականները հակառակ են դէպի անգղաբնական
սկզբունքները, մինչև հիմա էլ տիրում է եկեղե-
ցիներում հայ լեզուն և պէտք է տես յաւիտեան
Բայց ուսումնարանի վրա դարձնում եմ մեր Միւր-
թարան հայրերի ուղադրութիւնը: Ուսումնարանի
դրութիւնը շատ վատ է, դուրի է մանկավարժա-
կան ուղղութիւնից մինը Մազուրեան կը կարգայ,
մինը Սախաբայա, Վինտակպատա, Սաքրիստիա-
նօ և այլ այսպիսի գրքեր, ուսման էլ Լիկեղեցու հա-
մար փոխանաց կը պատրաստուէին: Մեր պատուե-
կները իրենց տեղը լայն կընեն, աշակերտներունը
նեղ, ուսումնարանի վերնայարկը շինել են իրանց
համար բնակարան, իսկ վարի խոնաւ սենեակը
դասարան, մինչև այսօր Մազուրեանի ժամանակ-
վայ նստարաններն են դրված, դասատուներն էլ
բոխականներն են: Մեր գաղօքը ներկայացնում

է միջնադարեան ուսումնարանի պատկեր: Մեր
պատուելիները, որոնց ձեռքումն է ուսումնարանի
և ժողովրդի դեկը, կը ծանօթացնեն տգետ ժողո-
վրդին հին նախապաշարմունքների հետ, թէ փափը
զուլա եկեղեցու է, թէ սատանան դժոխքը կը
տանի, եթէ նոր մարդոց զաղափարներուն նայը,
թէ կաթողիկոսեան դատ բոլորը հերիսիկոս են, թէ
սատանան, դեռ, չար այսը կը մտնի նոր ու-
սում առնողին մէջ և նորա սաւումը կը կոչուի
զիւական, թէ ինքեւս պէտք է ուսում, սատա-
նայից աւելի գիտնական չը կայ, այսպէս կը քա-
րոզեն վերապատուելի հայրերը: Յոյս ունիմ, որ
այստեղեան փոքր ի շատե կը զգաստանան մեր
պատուելիները և քիչ մը վար կը զան դժոխքից
սատանայից, և ուղեր կը դարձնեն մանուկների
կրթութեան ու մեր ուսումնարանի խնայալի դրու-
թեան վրա, վերադարձնելով ուսումնարանի վեր-
նայարկը և վարձելով լաւ հայագետ ուսուցիչներ,
որ տղայք իրանց ժամանակները դուր տեղը չանց-
կացնեն ազգիցներ սերտելով: Թող մեր տղայոց
մտքերը կրօնամոլութեան գաղափարներով չը վա-
րակեն և չը ձգեն ուժից թարմ մտքերը: Ուսումնա-
րանում նստած են մօտ 60—67 աշակերտներ մի
դաստան մէջ, ներս մտնողը ապականված օդից
չէ կարող շնչել: Բաւական համարելով այս անգամ
այսքանը, միւս անգամ խոստանում եմ օրիորդաց
նախկին ուսումնարանը նկարագրել, որով կը ծա-
նօթացնեմ ընթերցողներին հայ-կաթողիկ տարրի
հետ:

Հայ-կաթողիկ

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՕԿՏՐ ԵԱԿՈԲՈՎԻԶ շա-
րունակու մ է ընդունել ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ՄԻ-
ՖԻԼԻՍՏԻՖԱՆ ՀԻԼԱՆՔՆԵՐԻՆ ընդունել երեք-
շաբթի օրերը առաւօտեան 11 ժամից մինչև
12 ժամը Գօլգոթանկէ փողոց, Մուրաքանակու
տունէն 4-6

Կ. ՊԼՆՅԵՐ, ԼՏԱՄԼՆ-
ՄԱՆՅԵՆ ՓՈՂՈՑ ատեն
ԶՈՒՐԵԼՕՎԻՆ Եկող ձը-
մեովայ սեղծնի համար ատա
ջարկում եմ պատուելի հասա.

Պակութեանը ՄԵԾԻ ԲԵՆԵԿՈՒԹԵԼԱՄԻ ՉԵՈՒԹԻ Է ՈՏ-
ԻՒ Կարի ՄԵՐԵՆԵՆԵՐ, Երօզական առաջնակարգ ԳՈՐ-
ԾԱՐԼՆՆԵՐԻՅ, ամենանոր ՉԵԻԵՐԻ, չափազանց ԷԺԼՆ
ներով, այսինքն Չեռքի մեքենաներ 12—5 բուրբ: Ուրբի 50—
0 բուրբ: